հոգասցէ վարդապետն. և նա ոչ եղև տէր գործոյն, և մնացին անմեղ իրիցունքն ի բանտ զաւուրս (պաքաղ), մինչև գնացեալ ազգայնոց նոցունց Գ՚ զուռուշ տվեալ հազիւ ելին ի գրոյն։ Եւ յորժամ էառ զդրամն փաշայն, հրաման ետ թէ Այրն այն չէ ի ձեռ, և որո՞ւմ վերայ դնեմք զվնասն. այս երիցանցս բան դատաստանաւ տեսցի։ Եւ գնացին ի դատաստան և անպարտէին, բայց անիրաւութիւն և զրկանք յոյժ, զոր աբար Մուսլի սուպաշին և զայմախամ, որպէս և այլ բազումս։

Ցաւուրս յայսոսիկ լու եղև՝ թէ պատրիգն Երուսաղէմի Ցունաց եկեալ ի քաղաքս անյայտ, և գնացեալ յէտրէնէ առ վէզիրն կրկին գանկատ ի Հայոց, և ունել հոգս ինչ, զի նստեալ էր անդ ոչ սակաւ աւուրս։ Եւ մտեալ ի մէջ արք ոմանք ի մէնջ և գնացին առ պատրիգն քաղաքիս եւ՝ վասն է՞ր յերկարի այսքան աղմուկ և խռովութիւն ի մէջ մեր, թէ՝ Քրիստոնեայք եմք և այսքան զրամ և փող երթայ յերկուց ազգաց ի քսակս Օսմանցոց։ Եւ նոքա զնոյն ասեն. և երթևեկութիւն արարին ընդ նոսա, և ապա գնաց և պատրիգն մեր առ պատրիգն նոցունց, խօսս ինչ բազում լեալ ի մէջ իւրեանց։ Եւ նոցա հաւանեալ գրեցին առ պատրիգն Երուսաղէմի զի դարձցի ի քաղաքս և հաշտին երկոքինն. և ի մէնջ ևս մարդ առաքեաց Եղիազար վարդապետն առ յէտրէնէ, զի հաւանեցուսցէ, եւ բերին աստ։ Որ եւ Սուրբ Սարգսի երկրորդ շաբաթուն բարեկենդանի (26 Փեբր.) պատիւ արարին միմեանց, եւ մեք եւս ընդ պատրիարքաւն գնացաք ի տուն Խանճուն ի պատիւ և հաշտեցան։ Որ եւ Շաբաթ աւուր բուն բարեկենդանի (3 Մարտ) շարժ եղեւ։